

Հեռու կեցիր երդմունքէ, թէ և ճշմարտութիւնը հաստատելու համար հարկ ըլլայ :

Երբոր երջանկութեան մէջ ես, ըզգոյշ կեցիր մասնաւորապէս հպարտութենէ :

Նուրութիւնը չար մըն է :

Երեսէ մի թողուր աղքատ ու պաղատող ծերը :

Սիշտ արթուն կենալու է պարագաներու փոփոխութեանը :

Բաջինն եղիր օտարականին պատիւ ընելու, և աղէկ բարեկամ մը կը ստանաս :

Դանկ հայր մը ունենալը, որ բարկութեան տեղ՝ խոհեմութիւն ունի, ամենամեծ երջանկութիւն մըն է :

Բնութիւնն որ ամէն բան տուած է մեզի՝ ամէն բան կ'առնէ մեր ձեռքէն :

Թէ որ լեզուդ չըռնես, բանդ գէշ է :

Սարգ մահկանացու, ամէն բանի յուսա՝ մինչև 'ի ծերութիւն :

Վեզեցիկ տեսարան մըն է ընտիր բարութեան մը տեսնելը :

Բիթթ կը ջնջեն զընաւորութիւն :

Վատէ ըստ արդարութեան և ոչ թէ ըստ քու շահիդ :

Սարդիկ սովորութիւն ունին օտարականը միշտ նախամեծար սեպելու :

Վահալիժաբար գործելը՝ ստէպ շատ թշուառութիւններ կը բերէ :

Շատ մարդիկ սեղանի բարեկամ են՝ առանց ճշմարիտ բարեկամ ըլլալու :

Հարուստ մարդու համար ամէն երկիր հայրենիք մըն է :

Բաքինի խորհուրդներ միայն տուր բարեկամներուդ :

Յիշէ քեզի եղած բարիքները, մոռցիր քու ըրած բարիքներդ :

Ինչպիսի մեծ ընծայ է այն պզտի ընծայն, որ ժամանակին կը տրուի :

Բարեկամն որ իր բարեկամին համար կ'աշխատի, իր անձին համար կ'աշխատի :

Արթութիւնը պատիւ մըն է ամէն մարդկանց համար :

Որչափ ցաւեր կը պատճառեն մեզի մեր հաճոյքները :

Վեղութիւն քաշելու է իր կնոջ ու իր բարեկամին համար :

Բարեկամներդ գովէ՝ քան թէ զքեզ : Չար մարդիկ սովորութիւն ունին ամենաչար կոչելու բարի մարդիկը :

Կասկածը ահաւոր տանջանք մըն է :

Ներութիւնը դժուարակիր բեռ մըն է :

Երդար ծառայութիւններ միայն ընդունէ ու ըրէ :

Կը շարունակուի :


ԲՆԱԿԱՆՔ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ծովային խոզ :

Նախնի խոզ ըսուած ձուկը կիտի կարգէն է, և ինչուան 9 ոտքէն աւելի երկայնութեան կը հասնի : Բնէն ծովերու մէջ կը գտնուի, 'ի բաց առեալ Սիջերկրական ծովը : Բազմութեամբ մէկտեղ կը քալեն, և սաստկագոյն ալէկոծութեանց միջոց այնպիսի դիւրութեամբ ջրին երեսը կը կտրեն, իբրեւ թէ խաղաղ ըլլար ծովը : Բնտարակոյս ասոնց շարժմանն ու քալուածքին անհաւատալի արագութիւնը և ջրոյն մէջ ըրած խաղերն ու ոստմունքները՝ իրենց մկանանց ուժէն է, և լողի համար ունեցած ընդարձակ գործարաններէն :

Ես ձկան ամբողջութիւնը երկայնաձև կոնոնի մը կը նմանի՝ իր մարմնէն ու պոչէն ձևացած : Գլուին ալ ուրիշ փոքրիկ կոնոն մը կրնայ սեպուիլ, ու դէպ 'ի աչուրներէն վեր քիչ մը ուռած է : Ելուրներուն բիւր եռանկիւնի է, իսկ ականջը այնչափ պզտիկ է, որ հազիւ կրնայ տեսնուիլ : Նամեկները զինեալ են քառասունէն յիսուն պզտի սայրասուր ակռաներով : Սորթը մոյգ կապոյտ գոյն ունի : ասոր տակը բաւական հաստութեամբ կարգ մը ձերմակ



Ծովային խոզ

Ճարպ կը գտնուի, ուսկից եղ կը հանեն։ Այս միայն իր այս ճարպին համար է՝ որ հոլանտացիք, հանիմարգացիք և ուրիշ ազգաց նաւաստիներ վտանգաւոր ու դժուարին նաւարկութիւններ կ'ընեն ծովային խոզն որսալու համար։ Իսկ աբոնացիք և Վրէնլանտացիք ասոր միսը կ'ուտեն, յետ թողլու որ նեխի՝ որպէս զի աւելի փափուկ ըլլայ։ Վրսուի նաև թէ ան կողմի նաւաստիները երբեմն ասոր ջերմաջերմ արիւնը կը խմեն, ինչպէս զլիփինինը։

Ծովային խոզին էգը իւրաքանչիւր անգամուն մէկ ձագ մը միայն կը բերէ, և մեծ սէր կը ցուցնէ անոր վրայ։ Կը դիեցուցանէ զան ինչուան այն աստիճանն հասնի՝ որ իր կերակուրը կարենայ ինքիրմէն ճարել։ Իսկ իր սովորական կերակուրն է զանազան տեսակ

ձկներ, զորոնք մեծ վարպետութեամբ ու ճարտարութեամբ կը բռնէ։ Այս միայն էգերը իրենց ձագերուն վրայ տևողական սէր մը կ'երևցընեն, հապա նաև արուն իր կենաց մեծ մասը իր ընկերոջը հետ կ'անցընէ, և անոր պաշտպանն ու պահապանն է։ Այն սէրն ու նին ծովային խոզերը բոլոր իրենց ցեղին վրայ։ անոր համար ստէպ անհամար բազմութեամբ մէկտեղ կը քալեն՝ կանոնաւոր փաղանգներու ձև առած, իբրև թէ պատերազմի կ'երթան։ Արկարծուի թէ ծովային խոզերը իրենց այս փաղանգներուն հրամանատար և զլխաւոր իրենցմէ զանիկայ կ'ընտրեն, որ պատերազմներու մէջ ուրիշներէն աւելի ուժ, քաջութիւն ու աներկիւղութիւն ցուցուցեր է։